## ԱՆՄԱՀՈՒԹՅԱՆ ՃԱՄՓՈՐԴՆԵՐ



# ԿՌՎԵՑ, ՋՈՀՎԵՑ, ԱՆՄԱՀԱՑԱՎ

Ապրիլի 16-ին ծննդյան 31-ամյակի օրը զգաց էր, որ սա իր... վերջին տարելիցն է: Երկու օր անց հրաժեշտ տալիս համբուրել էր երեք դստրիկներին եւ տխուր ժպտացել. «Կտեսնվենք երեք ամիս հետո, կամ էլ...»: Սա այն կանխազգացումն էր, որը ցավոք, իրականացավ:

Հունաստանից ներգաղթած Սարգսի որդի Հակոբ Սարգսյանը Աղի խմբի երկաթգծամ պարտավոր էր եւ, միաժամանակ, Երրաղելեկտրացանցի հատուկ ռազմականացված գնդում «Կոմանդ» ենթակայանի • հրամանատարը: 1990-ին անդամագրվել Խորհրդային շրջանի «Դավիթ Բեկ» երկրապահ ջոկատին, մասնակցել Հայաստանի սահմանների պաշտպանությանը, Սարսանգի, Մաղավուզի, Բերքաձորի, Ամրամի մարտերին: Վերջինը Կարմիրավանն էր: Ապրիլի լույս 25-ի գիշերը պատմում է Հակոբի մարտական ընկերը, ջոկատը գրավել Աղդամի շրջանի Ումուդլու-Շոկանլու գյուղը եւ շրջակա թշնամական դիրքերը: Երկու անգամ մտան Կարմիրավան, սակայն ուժերն անհավասար էին... 18 առյուծասիրտ քաջերով կռվում էին 250-անոց ոհմակի դեմ: Միայնակ թուրքը մարդի դաշտում ոչինչ է, նրանք, գայլերի նման, դիրքավորվել էին խմբերով: Մեր տղաները տարածվելին հնարավորին չափ երկարացնելով ճակատային գիծը, եւ 8 ժամ դիմադրեցին: Հարկավոր էր նահանջել՝ վերախմբավորվելու, ուժերը կենտրոնացնելու եւ օժանդակություն ստանալու համար: Դիրքային մարտերը մի քանի օր շարունակվեցին: Մայիսի 4-ի գիշերը դրությունը սրվեց ճակատի ձախ թեւում, ուր ԼՂ-ի առանձնակի նշանակության գումարտակին սպառնում էր շրջապատման իրական վտանգ: Օգնության հասավ «Դավիթ Բեկը» եւ իրավիճակը փոխվեց՝ շրջափակումը ճեղքվեց: Մոտ 10 մետրից արձակված թշնամու գնդակներն այս անգամ շրջանցեցին պատանյակ Հակոբին, բայց ավաղ, Շուշիի գրավման տարելիցի օրը՝ մայիսի 8-ի առավոտյան, երբ արդեն գրավված էր նաեւ Կարմիրավանը, ականը պայթեց շատ մոտ, Ջոկատը կորցրեց առաջին զոհը: Մայրենի հողն ընդունեց եւս մեկ նահատակի արյունը, փոխակերպվելով՝ ողջերին ի զեն, ի վրեժ կոչելու համար: Եվս մեկ զինվորագրյալ՝ Անմահության ճամփորդների հավերժական դասակին:

Երկու հուշաքար է պատրաստվել Հակոբի (Կյաժ) հիշատակին, մեկն ուղարկվել է Մարտակերտից՝ մարտական ընկերների կողմից:

Ս. Գ.